ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԱՍՏԾՈ ԸՆԿԱԼՈՒՄԸ Ղ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԽՈՀԵՐՈՒՄ

Թումանյանի աստվածընկալումը յուրօրինակ է, հստակ ու ամբողջական: 1913 թ. ասած նրա՝ գրականության դերի մասին նշանավոր խոսքում շոշափելիորեն զծվում է դա. «Գրականությունը հայելի չէ լոկ. եւ եթե հայելի էլ ասենք, ապա շատ տարօրինակ ու կախարդական մի հայելի է նա: Նա ոչ միայն արտացոլում է ժամանակը եւ իր դեպքերն ու դեմքերը, այլեւ տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին, եւ ձգտում է կյանքում ստեղծել մարդու էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ պատկերը, որ տվել է նրան Աստված, կազմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից»[1]: Համանման միտք հանդիպում է նաեւ առաքելական թղթերում. «Բայց ամենս՝ բաց երեսով Տիրոջ փառքն ինչպէս հայելու մէջ տեսնելով նոյն պատկերի նման կերպարանափոխվում ենք փառքից դէպի փառք, ինչպէս թէ Տիրոջ Հոգուցը» (Բ Կորնթ. Գ.18):

Աստծո ներկայությունը Թումանյանը տեսնում է ամենուր, նրա համար Աստված այն բարձրագույն կենդանի արարող էությունն է, որը շունչ եւ իմաստ է տալիս բնությանը, տիեզերքին, մարդու գոյությանը: Բայց նման ընկալմանը եւ ըմբռնմանը բանաստեղծը հասել է՝ անցնելով երկար ճանապարհ՝ մտաթափառումներ, անվերջ պրպտումներ, փնտրտուքներ, որոնումներ, հոգեւոր վերելքներ - անկումներ: Դիպուկ է բանաստեղծի ինքնաբնութագրումը.

Կուրծքս երբեմն եռ է գալիս եւ հուզվում.
Ես մնում եմ անշարժ, ինչպես լուռ արձան,
Միտքս թռչում դեպի երկինք եւ սուզվում
Տիեզերքի խորության մեջ անսահման...

Թումանյանի՝ Աստծուն տեսնելու ճամփորդությունն սկսվում է երկրային կյանքում. երկրի փառքին անհաղորդ հոգու մի եզակի ճամփորդություն, որ նրան հեռացրել ու վեհացրել է մինչեւ հեռավոր աստղերը, մինչեւ տիեզերք: Երկրագնդի վրա թերեւս չգտնվի մեկը, ում չի հետաքրքրել, թե ինչ կա երկնքում՝ ամպերից ու աստղերից այն կողմ, չի ցանկացել թափանցել տիեզերքի առեղծվածային գաղտնիքների մեջ: Ստեղծագործող անհատները առավել նախանձախնդիր, առավել նպատակային, համառ, երբեմն զգույշ, երբեմն համարձակ, երբեմն անձնավորված, երբեմն անանձնական, երբեմն էլ զգայական ու ցավագին են մոտեցել տիեզերքին, նրա առեղծվածներին: Այդ մոտեցումից նախ ձեւավորվել, ապա եւ հստակորեն կայացել է նրանց աշխարհընկալումը, աստվածընկալումը:

1 «Հովհ.Թումանյան. Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ» մատենաշար չորս հատորով, 1964-1985,Երեւան, ՈՒՀ- 4, էջ 240:

Հազար թելերով կյանքի հետ կապված Թումանյանը միշտ ձգտել է թափանցել գոյության, տիեզերքի ու մտքի ամենաբարձր ոլորտները: 1913թ. մի հոդվածում գրում է. «Կյանքը իր ամբողջության մեջ մեծ է, շատ մեծ: Կյանքը --տիեզերական կյանքն է, եւ մարդու կյանքի ամբողջ վեհությունն ու քաղցրությունն լ հենց էն է, որ իր շրջապատի միջոցով պիտի ապրի էն մեծ կյանքով»[2]:

«Դեպի տիեզերական մեծ կյանքը» գնալու մարդկային հավերժական, անհասանելի նպատակը բանաստեղծի մեջ ծնվել է դեռ վաղ տարիներից: Նրան հանգիստ չի տվել Վերինի գաղտնիքը: Նախ ցանկանում է թափանցել անհունության գաղտնիքների մեջ /Ախ, ես երանի Դայծակ լինեի/, գտնել հոգում կուտակված հազարումի ինչուների պատասխանները, հասկանալ անըմբռնելին.

Յույց տայի մարդուն
Գաղտնիքը վերին,
Որ տեսներ՝ այնտեղ
Ի՞նչ բան կա ահեղ,
Կամ ո՞վ է նըստած,
Եւ ո՞ւր է Աստված:

Աստղալի երկինքը երկրին է պատմում «մեծությունն Աստծո»

Եւ բարիքներով լցված-լիացած
Երկիրն ունկնդիր երկնքի ճառին,
Քնելուց առաջ խոնարհ երկյուղած
Փառաբանում է մեծազոր տերին:

Իսկ ահա 1887թ. գրված բանաստեղծությունը՝ «Ամառվա գիշերը գյուղում», մի գեղեցիկ հովվերգություն է: Լուսնկա գիշեր է, վառ ցոլցլացող անհամար աստղեր, իսկ ներքեւում, լուռ խաղաղ քնած է գյուղը, քնած է հոգնած գեղջկական ընտանիքը սրահում, կալում կամ կտրի վրա.

Երկնքի դիմաց
Գրված են, քնած,
Վերեւիցն ասես
Ժպտում է Աստված:

Մարդը իր էությամբ այնպիսին է, որ խաղաղ ու հանգիստ է լոկ այն ժամանակ, երբ հստակ գիտե՝ պաշտպանված է, պաշտպանված մի «զորեղ», սուրբ ուժով: «Տէրը պահպանում է ինձ»,- ասում է Հին Կտակարանը (Սաղմ. Գ 5): Թումանյանի «Թագավորն ու չարչին» բալլադի սեւագիր տարբերակում եւս խոսվում է այդ մեծ սուրբ ուժի մասին.

Մի ուժ կա սուրբ մեզնից վերեւ,
Պայծառ աչքով նայում է ցած.
Ու հանցավոր հոգին էն սեւ
Դեպի վերեւ դեռ չի նայած:

Իհարկե, անհամեմատելի են բալլադի սեւագիր ու վերջնական տարբերակները, պարզապես այստեղ կրկին հիշեցվում է այդ վերին մեծ ուժի ներկայության մասին եւ այն, որ դեռ

2 «Հովհ. Թումանյան. Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ», Երեւան, 1985, հ. 4, էջ-224:

ոչ ոք չի նայել նրան՝ «ով ուզում է թող նա լինի...Փինաչի հեք, թե վեհապանծ Թ-ազը գլխին շահն Իրան»:

1989 թ. գրված «Երբ ես փխուր, հուսահատ» տողով սկսվող ոտանավորի մեջ[3] Թումանյանը խոստովանում է, որ երբ հուսահատ է ու փխուր, շուրջը՝ «մեռած, անապատ», եւ՝ «սրտիս երկյուղ է տիրում», մարդիկ էլ «անհամբույր» են ու անհաղորդ իր կանչին՝ հենց այդ պահին ինքն զգում է, որ՝

Մի զորություն հզորեղ
Ինձ հուսադրում է հանկարծ.
Եւ զգում եմ ամեն տեղ
Դուն ինձ հետ ես, Աստված:

Իր հոգու տխրությունը, թախիծը բանաստեղծը չափում է անդնդախոր ձորերով, որ «Աստծո հարվածի հետքերն» են: «Նախերգանք» -ում դիմում է սեւ, լայնաբերան ձորերին.

Ձեր անդունդներով եկեք չափվեցեք.
Դուք էլ եք, տես՛նեմ, էնքան մեծ ու խոր,
Ինչքա՛ն իմ հոգու թախիծն ահավոր...

Բայց միշտ զգում է հուսադրող զորությունը. այդ վերերկրային, գերբնական ուժը նա զգում է անգամ երազում:

Խոսելով Թումանյանի՝ «տիեզերական խոհերի»՝ մարդ-տիեզերք հարաբերության, հավերժական կապի մասին՝ Էդվարդ Ջրբաշյանը գրում է. «Ողբերգորեն վերապրելով տիեզերքի ժամանակատարածական անսահմանության եւ մարդկային կյանքի ակնթարթային կարճատեւության հակադրությունը, Թումանյանի քնարական անհատը ոչ ուզում է «կլանել» տիեզերքն իր մեջ եւ ոչ էլ անէանալ նրա անհունում: Մարդը, նրա պատկերացմամբ, մահից հետո էլ ապրում է եւ հավերժանում է տիեզերքի մեջ: Այդ գիտակցությամբ էլ նա հաղթահարում է մահվան ողբերգությունը»[4]: Ժամանակի աստվածապարգեւ ընկալումն ամենահրաշալի գիտակցություններից մեկն է, որին հասել է մարդը համատիեզերական գոյության մեջ:

Աստվածային տիեզերական ներդաշնակությունն ունի ժամանակային ճշգրիտ ծրագրավորում, որի ստույգ բացահայտումը բաց է անում Հավիտենականության գաղտնիքը, ինչպես վկայում է նաեւ «Գործք առաքելոց»-ը. «Մէկ արիւնից ստեղծեց մարդկանց բոլոր ազգերը, որ բնակուեն ամբողջ երկրի երեսին. Հաստատեց նախակարգեալ ժամանակները եւ դրեց նրանց բնակութեան ժամանակները եւ դրեց նրանց բնակութեան սահմանները, որ փնտռեն Աստծուն» (Գործք ԺԷ 26), «Եւ Նա ասեց նորանց. Ձեր բանը չէ գիտենալ ժամերը եւ ժամանակները, որ Հայրն իր իշխանութիւնումը դրաւ:... Բայց դուք զօրութիւն կ՝առնէք..» (Գործք 7): Ժամանակի հետ ճշգրիտ հարաբերակցությունը երկրային կյանքում անկասելի է ու անհրաժեշտ: Ուստի ժամանակը, իբրեւ ընկալում իր հարաբերականությամբ հանդերձ, շոշափելի մի իրողություն է, որի մեջ կանք, գոյություն ունենք եւ որի առանցքում իբրեւ մարդ հարաբերվում ենք այդ բոլորի ստեղծող Արարիչ Աստծո հետ:

---

3 Տ. Փիրումյանի վկայությամբ բանաստեղծն այն գրել է՝«թափանցելով Քրիստոսի, երեւի նաեւ իր դրության մեջ» (**Հովհ. Թումանյան,** Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 1, Երեւան, 1988, էջ 553):

4 **Էդ. Ջրբաշյան**, Թումանյանը եւ հայ գրականության ավանդույթները, Երեւան, 1994, էջ 238:

Տիեզերքը ճանաչելու, նրա անըմբռնելին դույզն-ինչ հասկանալու փափագ-մղումն է Թումանյանին ներշնչել գրելու «Տիեզերքի ընթերցումը» (1920) բանաստեղծությունը.

Վերանում է վեր հոգիս զըվարթուն-
Չըկա մոտ ու փար, չըկա վեր ու ցած,
Տիեզերքն ամբողջ հայրենիք ու տուն,
Ու ես մի ազատ՝ անպարբեր աստված:

«Եւ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերովը. (Ծնունդոց Ա 27), եւ այդ մարդը անըմբռնելին ըմբռնելու տվայտող հոգեվիճակից ելնելով, վերացած հոգով շրջում է որպես մի անպարբեր աստված՝ տիեզերքում, որը նրա համար հայրենիք է ու տուն: Միայն այդ հոգեվիճակն է մղում բանաստեղծին իր աստվածանալու մասին խոսելու. դա տիեզերքին ոչ թե «տիրելու», այլ ճանաչելու, ժամանակատարածական անսահմանությունը ընկալելու փափագ է: Թումանյանը իրատես է, լավ գիտե, որ հնարավոր չէ դուրս գալ տիեզերքի սահմաններից, փախչել ժամանակի եւ բնության օրենքներից՝ «Ջուր եմ փախչում, ինձ խաբում, հազար կապ է ինձ կապում»: Նա աշխատում է հասկանալ կյանքի հավերժական շրջապտույտի, հոլովույթի իմաստը, մարդու տեղն ու դերը բնության, տիեզերական անսահմանության շղթայի մեջ:

Թումանյանը բնության, տիեզերքի հավերժությունն ու անսահմանությունը դիտում, ընկալում է հայեցող փիլիսոփայի ներհուն հայացքով՝ դրանից բխեցնելով նաեւ աստվածային արարչության գաղափարը: Այս կապակցությամբ Էդ. Ջրբաշյանը գրում է. «Թումանյանի ըմբռնմամբ՝ աստված եւ բնությունն փաստորեն նույնանում են իրար հետ: Աստված ինքը բնությունն է, որի յուրաքանչյուր շարժման մեջ դրսեւորվում է բարձրագույն բանական սկզբունք: Այս հայացքները, եթե դրանք փոխադրենք փիլիսոփայության լեզվի, չի կարելի այլ կերպ անվանել, քան պանթեիստական»[5]: Բայց Թումանյանի աշխարհազգացողության ակունքները ժողովրդական արմատների մեջ են, թեեւ բոլոր դեպքերում նրա աշխարընկալումը սնվում է երկնային ակունքներից: Անհերքելի է, որ մարդը բնության անբաժանելի մասնիկն է, բայցեւ անհերքելի է, որ արարիչը մեկն է՝ Աստված: Ուրեմն Թումանյանի մոտ ամեն ինչ սկսվում է եւ վերջանում է միայն Աստծով: Այսինքն՝ Թումանյանի բանաստեղծական աշխարհընկալումը իր ամբողջության մեջ վերերկրային է:

Այս կապակցությամբ փորձենք դիտարկել «Բարձրից» բանաստեղծությունը: Քնարական հերոսը մի պահ ուզում է կտրվել առօրյա աշխարհից, խորասուզվել տիեզերական անհունության մեջ.

Իմ բարի սրտի էն մեծ խոհերից,
Էն մեծ խոհերի անհուն խորերից՝
Կամեցավ՝ ելավ իմ հրզոր հոգին,
Որ բարձրից նայի Աստծու աշխարհքին:

Բանաստեղծը իր «հոգեւոր ճամփորդությունը» կատարում է «հարազատ բարձունքից»՝ իրական աշխարհի գործերն ու վիճակը ավելի լավ տեսնելու եւ հասկանալու համար: Ու վերեւից «ամենատես» հայացքով նա առավել հստակ ու խորն է նկատում աշխարհում տիրող անվերջանալի անարդարությունները, թշնամանքի ու ատելության ոգին, նկատում է

5 **Էդ. Ջրբաշյան,** Թումանյան - ստեղծագործության պրոբլեմներ, Երեւան, 1995, էջ 150:

գեղեցիկ աշխարհում զանազան ասպվածներ ու սուրբեր՝ «խիստ խրտրող ու դաժան»: Մեկ այլ բանաստեղծության մեջ («A la Նադսոն. Պոետին») եւս կա ակնարկ այլազան ասպվածներ պաշտելու, կռապաշտության մասին: Բանաստեղծը, դիմելով գրչակցին, հորդորում է.

Եւ պատվանդանը հիմքից խորտակիր
Ոսկի հորթերի, ինքնամոլության
Մարդոց սրտերում դարձյալ հաստատիր
Լրբությամբ մերժած զահն ասպվածության:

Ինչպես եղավ Իսրայելի դեպքում, երբ ժողովուրդը չսպասեց ու չհամբերեց, որ Մովսեսը սարից իջներ եւ հաղորդեր Աստծո հորդորը, «ապականվեցավ»՝ նոր ասպվածներ շինելով. «Շուտով խոտորեցին այն ճանապարհիցը, որ իրանց պատուիրեցի. իրանց համար ձուլածոյ յորթ շինեցին եւ նորան երկրպագութիւն արին, եւ նորան զոհեր մատուցրին, եւ ասեցին. Սորանք են քո ատուածները, ով Իսրայէլ» (Ելից ԼԲ 1:7): Այս իրողության բանաստեղծական արձագանքն է թվում Թումանյանի «Բարձրից»-ը:

Տեսավ՝ ուրում են ամենքն ամենքին.
Ամեն հայրենիք՝ իրեն զավակին,
Եւ իր պաշտողին՝ ամեն մի ասպված,
Եւ կյանքը տանջանք, ցավ համատարած:

Բանաստեղծը չի գտնում մի տեղ, մի անկյուն շնչելու ասպվածային շունչը՝ լի անվերջ սիրով: Ու նրա համար միակ հուսալի ապաստանը մնում է սեփական սիրտը, որ լեցուն է միայն ասպվածային անվերջ սիրով.

Ու իջավ նորից էնտեղ հանգչելու-
Խոր, արարչական հանգիստն անխռով,
Էնտեղ հանգչելու, էնտեղ շընչելու
Էն մեծ խոհերով, էն անվերջ սիրով...

Պանթեիստական հայացքը Աստծուն դիտում է ամենուրեք, նաեւ մարդկային հոգում, յուրաքանչյուր մարդու մեջ, քանի որ ինչպես բնության ամեն իր ու երեւույթ, մարդը եւս Արարչի ստեղծագործությունն է: Սա նույնն է, թե տեսանելին միայն Աստծու արարած աշխարհն է, տիեզերքը, իսկ ինքը՝ Արարիչը հավերժորեն անտեսանելի է: Մարդը իր համար փորձել է տեսանելի դարձնել անտեսանելին, երեւութացնել աներեւույթը՝ հորինելով հեթանոս ասպվածություններ, հետո Բուդդա, Եհովա, Բահաղ եւ ուրիշներ: Ահա թե ինչու Թումանյանը միայն սեփական հոգում է գտնում «խոր, արարչական հանգիստն անխռով»: Իսկ Վահան Տերյանը «Արթնացում» բանաստեղծության մեջ չի հավատում մարդկանց հորինած «բարի կուռքերին» եւ ապավինում է թեեւ անտեսանելի, բայց «կենդանի» Աստծուն.

-Բարի կուռքեր են մեզ շրջապատում,
-Կենդանի Աստված, ես քեզ եմ կանչում,
-Ինձ քո կարոտն է անդադար տանջում,
Բարի կուռքերին ես չեմ հավատում[6]:

«Աստուծոյ հոգին է ստեղծել ինձ եւ ամենակարողի շունչը ինձ կեանք տուել»-ասվում է Հին Կտակարանի Հոբի գրքում: (Յոբ ԼԳ 4): Իսկ Պողոս առաքյալը այսպես է դիմում Կորն-

6 **Վ. Տերյան**, Երկերի ժողովածու, հ. 2, Երեւան, 1973, էջ140:

թացիներին. «Այս աշխարհում կուռքերը ոչինչ են. որովհետեւ չկա այլ աստուած բացի մէկից, թէպէտեւ այսպէս կոչուած աստուածներ կան թէ երկնքում եւ թէ երկրի վրայ, ինչպէս եւ կան աստուածներ եւ բազում տէրեր: Բայց մեզ համար մէկ Աստուած կայ, Հայր, որից՝ ամենայն ինչ, եւ մենք՝ նրանը, եւ մէկ Տէր Յիսուս Քրիստոս, որով ամէն ինչ, եւ մենք՝ նրանով» (Ա Կորնթ. Ը 5,6):

«Խորհրդածություն» բանաստեղծության մեջ Թումանյանը մի «հանդուգն խորհրդով» ձգտում է պարզել, բաց անել Աստծու խոստացած դրախտի «անմեկին գաղտնին»: Մարդը իր սկզբնական վիճակում երանության մեջ էր դրախտում, սակայն ընկնելով մեղքի մեջ եւ ամբարտավանանալով՝ կորցրեց իր երանական պատկերն ախտերի մեջ եւ զրկվեց երանությունից: Բանաստեղծը իր հարցն է ուղղում անհայտին. «Որն է դրախտը - վայրն երանավետ»: Տող առ տող մարմին են առնում 21-ամյա բանաստեղծի հոգին խռովող խոհերը՝ անհանգիստ, մտահոգ. միթե մարդկային տառապած կյանքն է իր համար ստեղծել այդ սուտ մխիթարանքը.

Ոհ, մի՞թե եւ ես, ինչպես մի հնչյուն,
Այս իմ հույսերիս, ձգտումներիս հետ
Պիտի մեռանիմ, չքանամ անհետ...

Տանջող կասկածին, սակայն, հետեւում է աներկբա համոզմունքը. միայն Աստված կարող է փարատել մահի տարակուսանքների ահարկու տագնապը, ցրել կասկածները եւ հավատով զորացնել հոգին: Կյանքի Աստվածը՝ Հիսուսը, եկել է իր նմանին ՝ մարդուն, ազատելու, նրան լվանալու ախտերից եւ վերստին երանության ուղղելու:

Չէ, սիրելի է խոստումն երկնքի-
Յոյսն հաւերժական, անվախճան կեանքի.
Հեռու ինձանից հոգեմաշ կասկած,
Ողջոյն քեզ, ողջոյն, ով կեանքի Աստուած
Արի, հայտնիր, նշկահիր մահու
Տարակուսանաց տագնապն ահարկու...

Բանաստեղծի այս տագնապալի հարցը, փրկության հույսն ու հավատը հնչում են նաեւ Նոր Կտակարանում. «Ով մահ, ուր է քո խայթոցը, գերեզման, ուր է քո յաղթութիւնը» (Ա Կորնթ. ԺԵ 55): «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Եթէ մէկն իմ խօսքը պահէ, նա մահ չի տեսնիլ յաւիտեան» (Յովհ. Ը 51):

Աստծու խոստացած անմահության հույսին ու թաքուն հավատին Թումանյանի խորհրդածություններում առաջ է գալիս մի նոր տարակույս. ինչպե՞ս պիտի ինքը կյանք առնի կրկին, ինչպե՞ս ինչ կերպարանքով է վերածնվելու.

Արդյոք լուսակազմ, աննյութ, անմահջՓ
Պիտի սավառնեմ անծայր եթերքում,
Թե՞ իբրեւ մի հունչ շրջեմ աշխարքում,
Թե անփույթ, անգործ թափառեմ պիտի
Մարդոց աչքերին անտեսանելի,
Թե ամպերի մեջ պիտի եւ հանգչեմ
Եւ ոտքիս տակից կայծակներ իջնեն...

Այս տարակույսներն, անշուշտ, ծագել են Հայտնության խոսքումից. (Ա Կորնթ. ԺԵ 53-54):

Բանաստեղծի այս նոր տարակույսին եւս հետեւում են հասարակ մահկանացուի՝ գրականության մեջ շատ անգամ կրկնված ինքնաձաղկումի եւ ներողության խոսքերը.

Օ, ներիր, Աստված՝ ծածկագետ, անհուն,
Ներիր մեծամիտ, զառոզ պատանուն.
Աննշան ճճիս չարաչար մեղա,-
Հանդուգն խորհրդով խորամուխ եղա,
Զգտեցի պարզել քո աստվածային
Անհասանելի, անմեկին գաղտնին:

Հեշտ է նկատել, որ Թումանյանի «Խորհրդածությունը» շատ բանով հիշեցնում է Պետրոս Դուրյանի «Տրտունջքը» եւ «Զղջումը»: Խոսքն, իհարկե, անմիջական ազդեցության կամ նմանողության մասին չէ: Ընդհանրության հիմքը երկու քսանամյա հանճարեղ բանաստեղծների բնորոշ մղումն է՝ ճանաչելու անճանաչելին, թափանցելու կյանքի ու մահի հավիտենական ու երբեք չլուծվող առեղծվածների, աստվածության անքննելի էության մեջ: Տարբեր են, սակայն, երկու բանաստեղծների խառնվածքները: Ռոմանտիկ Դուրյանի ինչպես ընդվզումը նախախնամության սահմանած կարգուսարքի դեմ, այնպես էլ զղջումը ուղեկցվում են ներաշխարհի բուռն փոթորկումներով. ինչպես «Տրտունջքը», այնպես էլ «Զղջումը» ուղղագիծ, հեղեղուն ու աներկմիտ են: Թումանյանն, ընդհակառակը, խաղաղ ներհայեցողությամբ է ձգտում փարատել հոգու տարակույսները, գերադասում է անգամ «կույր հավատով» զորացնել հոգին, քան թե անձնատուր լինել հավիտենական տարակույսների տառապանքին...

Մի էական տարբերություն եւս: Դուրյանի տրտունջները միայն ընդհանուր ու թույլ նշմարելի աղերսներ ունեն առարկայական աշխարհի հետ, որ իրականում «Աստծու ծաղրն է»: Բանաստեղծի հոգին խռովող ընդվզումի ու զղջման փոթորիկները վերաբերում են առավելապես վերերկրային ոլորտներին: Թումանյանի տարակույսները ծագում էին գլխավորապես իրական կյանքի հանգամանքներից, այդ հանգամանքների շրջապտույտում հոգու խաղաղությունը կորցրած անհատի անհանգիստ մտորումներից...

Թումանյանը ապրում էր անցման մի դարաշրջանում, երբ հայ ժողովուրդը մի կացութաձեւից անցնում է մյուսին: Այդ բարդ ու հակասական տարիներին տեղի էին ունենում դժվար անցումներ եւ արտասովոր ցնցումներ, բարոյահոգեբանական փոփոխություններ: Երկու դարի արանքում տառապում է մարդը, նա կորցրել է հինը եւ դեռ չգիտե, թե նորն ինչ է բերելու: Դրան միանում են ազգային աղետները, սրվում են հազարամյա ակունք ունեցող չարիքները: Իրադարձությունների բովում ժամանակի ընթացքում բանաստեղծը տեսնում էր նաեւ անտեսանելին, այն, ինչ տեղի էր ունենում կյանքի ճնշման տակ հոգեբանության, բարոյականության դաշտում: 1904 թ. բանաստեղծը գրում է. «Ամեն բան աչքիս դատարկ է թվում...որովհետեւ անցավորն ընկել է իմ սրտից, իսկ անանցի հետ կապված չեմ դեռ, անհայտը, որ պետք է ունենա ոգեւորված գրողը, դեռ խավար է, դեռ մութն է ինձ համար,... ու թափառում է իմ հոգին»[7]: Ներքուստ փոթորկված, կորցրած ներքին ներդաշնակությունն

7 **Նովի. Թումանյան**, Երկերի ժողովածու 4 հատորով, Երեւան, 1969, հ. 4, էջ 374:

ու ամբողջականությունը՝ Թումանյանը տենչում է հայրենի եզերքը, որ պիտի բերի հոգու ներդաշնակություն՝ ազատելով սրտի ու մտքի պառակումից: Բայց հայրենի եզերքի անդորրությունն էլ երեւութական է: Վերանում են նահապետական կենցաղի պարզությունն ու անմեղությունը: Այս առիթով Ա. Տերտերյանը գրում է. «Ներքին հակասությունները, կենսական անհներդաշնակությունները, որ հորինել է մեշչանական աշխարհը, վերջ չունի: Բանաստեղծը ուրիշ փրկության միջոց չգիտե, բայց միայն այն , որ կոչ է անում, կանչում է Աստծուն: Նահապետական աշխարհի քայքայման անխուսափելիություն եւ նրա կորուստը հափանելու անճարակության մորմոքն է դա ՝ ուղղված Գերբնական էակին»[8]: Այդ ապրումների թարգմանն է 1891 թ. «Կանչ» բանաստեղծությունը:

Կյանքի խաթարված ներդաշնակությունը վերականգնելու հույսը աստվածային նախասկզբի հետ կապելու Թումանյանի բանաստեղծական գաղափարաբանությանը, իհարկե չարիքը դիմագրավելու «անճարակության մորմոք» չէ. անվանի գրականագետի այնպիսի որակումը ժամանակի աստվածամերժ գաղափարախոսության հետեւանք էր: Թումանյանի բանաստեղծական կենսահայեցությունը բոլորովին նորություն չէր. դա ինչ-որ իմաստով զարգացումն ու խտացումն էր ԺԹ դարի հայ լուսավորական շարժման մեջ տարածված այն մտադրույթի, թե նախախնամությունը մարդուն ստեղծել է ազատ՝ նրա կենսագործունեության համար սահմանելով իրերի շարժման ներդաշնակությամբ կառավարվող աշխարհ: Այդ ներդաշնակության խախտումը պայմանավորված է մարդկային սխալ գործունեությամբ: «Հաշտ ու խաղաղ մարդկության» իրականացման ճանապարհը վերադարձն է արարչական մաքուր սկզբին: Իսկ դրա համար անհրաժեշտ է հավատ ու պայքար, որ Թումանյանի ստեղծագործության մեջ հաճախ արտահայտվում է որպես աստվածականչ:

Այս տեսակետից դիտենք «Կանչ» բանաստեղծությունը, որ ինքնատիպ դիմում-բողոք է առ Աստված: Աստվածականչի այս քնարական երակը հարուստ ավանդույթներ ուներ հայոց բանաստեղծության մեջ Գրիգոր Նարեկացուց սկսած մինչեւ Ֆրիկ ու Պետրոս Դուրյան: Տեսանելի է Թումանյանի հոգեկան կապը հատկապես Նարեկացու հետ, որի «ի խորոց սրտի խոսքը» Արարչի հետ՝ մշտապես ուղեցույց է եղել նրա համար: Արշակ Չոպանյանի նման Թումանյանն էլ հավատացել է, որ Նարեկացուին տեսել է Աստծուն, «իր գլուխը բարձրացրել է մինչեւ երկինք ու զրույց արել Աստծո հետ երես առ երես»[9]: Թումանյանի «Կանչ»-ը այդ ավանդույթի շարունակությունն ու արձագանքն է:

«Կանչը» Թումանյանի բանաստեղծական ներշնչանքի ամենահզոր պոռթկումներից է: Այդպես էլ ընկալել ու արժեքավորել են ժամանակակիցները. «Բարձր գեղարվեստական ստեղծագործություն», «անգին գոհար», «գլուխ գործոց», «ամենահաջող կտոր» եւ այլն[10]:

Բանաստեղծը, տեսնելով աշխարհում կատարվող հավոր եւ անհամար չարիքները, զարմանքով, տարակուսանքով ու դժգոհությամբ է մտածում Աստծո «անտարբերության», «չեզոքության» մասին:

Տեր արագահաս,
Աստված արդարի,

8 **Արսեն Տերտերյան,** Երկեր, Երեւան, 1980, էջ 80:
9 **Հովհ. Թումանյան,** Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 331:
10 Տես «Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ», հ. 4, էջ 313-318:

Ո՞ւր ես, եթե կաս.
Ես աղոթք արի.
Բայց սրածության
Ահարկու ձայնից
Խլացավ իսկույն
Իմ աղոթքն անբիծ:

Ինչո՞ ւ տակավին
Չես պատժում չարին,
Ո՞ւյժդ է պակասում,
Թե՞ չենք աղերսում:
Դու չես տվել սուր,
Որ խաղաղ հոգին
Սարսափի իզուր.

Թե՞ դու չըգիտես,
Որ այստեղ, երկրում
Մարդը ծպտերես
Մարդ է գիշատում-
Դե արի ու տես,
Զարկիր ու շանթիր,
Եթե Աստված ես
Դու վըրեժխնդիր:

Թումանյանի աստվածականը լեցուն է ցավով ու տագնապով, որ միանգամայն երկրային, առօրյա ենթահող ունեն: Տվայտում է երիտասարդ բանաստեղծի երկփեղկված սիրտը. կասկածն ու հավատը խառնվել են: Այդ հոգեշփոթի լարված դրսեւորումն է «եթե կաս, եթե Աստված ես» բացականչությունը: Կանչը գալիս է սրտի խորքերից եւ պտտվում երկրային մարդու ցավերի, տառապանքների, խաթարված կյանքի շուրջ: Բանաստեղծը դառնությամբ ու ցավով բաց է անում իրեն տանջող միտքը. կյանքում օրեցօր ավելանում է չարիքը, քաոսից ստեղծված ներդաշն աշխարհը կրկին դարձել է քաոս, որ ալեկոծվում է չարիքներից, բարոյական աղետների ու ախտերի անվերջ կուտակումներից: Աշխարհում տիրող դառն ու դաժան իրականությունը, անարդարություններն ու ժողովրդի կրած անլուր տառապանքները նրան հարկադրաբար մղում են կասկածամտության՝ եթե Աստված ինքը չի կամեցել, որ կյանքը լինի «անսպառ տանջանքի հանդես», եւ եթե մարդկանց հոգու պարզությունը ինքը չի վարակել չար նախանձի մահացու թույնով, ուրեմն թող մեղմացնի չարության ամբարտավան կիրքը: Աստծու արդարության դատաստանին ներկայացնելով արատավոր աշխարհը՝ բանաստեղծը չի մոռանում նաեւ մարդուն, որ եթե Աստծո արարածն է, նաեւ ինքն իր ձեռքով պիտի վերականգնի այս աշխարհի՝ իր իսկ խաթարած ներդաշնակությունը:

Աստծու արդարության հանդեպ անվստահության ու կասկածի այս հոգեբանությունը անծանոթ չէր նաեւ Թումանյանի ժամանակակից ուրիշ բանաստեղծների: Թեքեյանն, օրի-

նակ, տեսնելով, որ չարիքի ու թշվառության գումարն ավելանում է աշխարհում, որ սիրո դեմ վերստին չարն է կանգնած, բայց Աստված մարդուն դեռ սեր-հնարավորություն է տալիս, զարմանում է. «Աստված իմ, ինչպես ըզքեզ ըմբռնեմ» («Շվարում»[11]): Շվարումի, տրտունջի զգացումները շիկանալով անգամ հասնում են աստվածամերժման. «Գիտեմ գաղտնիք մահավոր- Այս Աստվածն է սուտ Աստված»[12]: Բայց այդ մերժումը չի վերաբերում «բուն Աստծուն», այլ այն, որ մարդիկ են ստեղծել, կերտել, եւ պիտի մեռնի այդ Աստվածն այն մարդուն հետ գիրկընդխառն, որպեսզի «Բուն Աստվածը»՝ ճշմարիտ, կենդանի, արդարամիտ, վերադառնա ու «կազմե նորեն մարդու նոր հոգին»: Իսկ Ռուբեն Սեւակը, չկարողանալով հանդուրժել դարի նյութապաշտ ոգին, խորապես ցնցված Ադանայի ողբերգական դեպքերից, բացականչում է. «Չէ՞ որ դուն վաղուց մեռեր ես Աստուած»[13]:

Սակայն ինչպես այս վերջինների, այնպես էլ Թումանյանի կասկածը չի հասնում բացարձակ աստվածամերժման, քանի որ թեեւ ցավը շարունակական է, բայց կասկածը ակնթարթային է: Դա խոսում է բանաստեղծի խոր հավատի, լավատեսության մասին: Կյանքը տանջանքի հանդես է, մարդկանց ամբարտավան կրքերը մեղմանալ չգիտեն, կեցության անդորրը խախտվում է սրածության ահարկու գոչյուններով, ինչպես վկայում է նաեւ Ժողովողի գիրքը: «Ու նաեւ մարդկանց որդիների սիրտը լիքն է չարութիւնով» (Ժողովող Թ 3): Եւ դրանց դեմ Թումանյանը որպես բանաստեղծ, որպես մարդ-քաղաքացի պայքարում, կռվում է Աստծո անունով: «Քո անվան հուսով կռվեցի երկար» խոստովանում է բանաստեղծը եւ խնդրում է Բարձրյալին վրեժխնդիր լինել: Ըստ առաքելոց թղթերի. «Վրէժխնդրութիւնն իմն է, եւ ես հատուցումը կ՚տամ, ասում է Տէրը » (Հռովմ. ԺԲ 19):

«Վրեժխնդիր Աստված» արտահայտությանը հանդիպում ենք նաեւ «Ալեք» պոեմում[14]: Հայրենի ժողովրդի խաղաղ կյանքը վրդովում է «երկնային պատուհասը»՝ թուրք Ալին: Լցվում է քաջ Ալեքի համբերության բաժակը: Նա սպանում է ավազակ Ալիին: Բայց իբրեւ խաղաղասեր ու բարեպաշտ հայ մարդ՝ թողություն է խնդրում Աստծուց՝ թափած արյան համար: Հատկանշական է, սակայն, որ նրա «մեղքին» թողություն է տալիս անտառում նրան հանդիպած քահանան՝ քաջալերիչ խոսքերով.

Անիրավ մարդու դիմաց
Վրեժխնդիր է եւ Աստված:
Վրեժխնդիր է եւ Աստված,-
Ծեր անտառը որոտաց:

Այսպես բացվում է թումանյանական աստվածականչի իրական ենթիմաստը: «Կանչ»-ում Աստծուն բնութագրելիս բանաստեղծը օգտագործում է մակդիրներ, որոնց հանդիպում ենք եւ Աստվածաշնչում, եւ Նարեկացու «Մատյանում»: Այսպես՝ «Եթե Աստված ես դու արդարության», «Տեր արագահաս, Աստված արդարի», «Եթե Աստված ես Դու անմեղության» եւ այլն: Ըստ Նարեկացու՝ «Աստուած բարերար, հզօր, ահաւոր» (Բան ԺԳ), «Առաջնորդ խաղաղութեան», «Ով իրաւադատ, ահաւոր, անճառ, անպատում, հզօր, աստուած բո-

11 **Վ. Թեքեյան,** Երկեր, Երեւան, 1981, էջ 298. Հայ դասականների գրադարան:
12 Անդ, էջ 303:
13 **Ռուբեն Սեւակ,** Երկեր, Երեւան, 1981, էջ 175:
14 Տես **Հովհ. Թումանյան,** Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 3, Երեւան, 1989, էջ 25:

լորից». (Բան ԻԴ) Աստվածաշնչից՝ «Ամենակարողը» (Եսայի Թ 6), «Գերիշխանը» (Դան. Ը 25), «Անփոփոխելին» (Երբ. ԺԳ 8):

Բանաստեղծի հոգում շարունակում է ապրել Աստծո արդարության եւ վրեժի հույսը: Հիշենք աստվածաշնչյան մոտիվներով գրված «Աստծո սպառնալիքը», որ ազդարարում է Արարչի՝ գալուստը եւ «Կանչ» -ի յուրօրինակ շարունակությունն է: Տեղին է հիշել նաեւ Աստծու հորդորը, որ հնչում է Երեմիա մարգարեի միջոցով. «Կանչիր ինձ, եւ ես քեզ պիտի պատասխանեմ եւ ես քեզ պիտի մեծամեծ եւ անհասանելի բաներ իմացնեմ, որ չգիտես» (Երեմիա ԼԳ 3): Թումանյանի բանաստեղծության մեջ Աստված արդեն խոստանում է գալ.

Այժըմ ես կըգամ, ասում է Աստված,
Օգնել աղքատին իր ծանրը կըռվում:

Աստվածային այս խոստումը հնչում է իբրեւ պատասխան «Կանչ»-ի սրտնեղած հարցին «Ո՞ւյժդ է պակասում, թե չենք աղերսում»: Ահեղ ու արդար դատով է սպառնում Աստված աշխարհի հզորներին՝ նրանց գործած բոլոր չարիքների, անօրինությունների համար:

Մի՛թե կարծում եք՝ ուժն էր պակասում,
Եթե համբերեց դատելուց առաջ:
Ես հուր եմ ձգում ճընշվածի հոգին-
Նորա համարձակ լեզվով ձեզ դատեմ,
Ես ուժ եմ տալիս աղքատի բազկին,
Նորա թիկունքին՝ գալիս եմ ձեր դեմ:

Ակամա հիշում ես Իսահակյանի «անհուն վրեժի եւ ատելության» հայտնի կոչը աշխարհի թշվառներին, անտուններին եւ անոթիներին:

Ի դարի սկզբին՝ իր ստեղծագործական հնարավորությունների բարձրակետին, Թումանյանն էռվին ապրում, այրվում էր իր օրերի ու ժամանակի հրատապ խնդիրներով: Նրան հոգու կորով էր տալիս այն խորհրդավոր զորությունը, որ տանում է դեպի կեցության հեռավոր ակունքները, կապում ժողովրդական հազարամյա հիշողության հետ: Տեղի են ունենում ժամանակների, անցքերի եւ բարոյական-հոգեբանական արժեքների յուրօրինակ ընկալումներ ու թանձրացումներ, որոնք հանգեցնում են ժողովրդի կյանքի ու գոյի տիեզերական շարժման բանաստեղծակա ամապատկերի ստեղծմանը: Մի նամակում բանաստեղծը գրում է. «Ես ավելի լավ եմ համարում, որ թույլ տանք մեռելոց թաղել զմեռյալս իրեանց, եւ մենք, թեեւ քաղցր է հասարակության ցավով տնքալ, մեր տկար ուժերը կազդուրելու եւ ազգի եւ մարդկության բարօրության օգտին գործադրելու մասին մտածենք»[15]: Ստեղծագործող անհատի կյանքի խորհուրդը պիտի լինի մտածել ազգի եւ միաժամանակ մարդկության բարօրության մասին, դիմել «դեպի կատարելության սահմանները, դեպի Աստված»: Հենց այս շրջանում է, որ ավելի է զորանում նաեւ բանաստեղծի հոգեւոր տեսողությունը, աստվածընկալումը: Արդեն Աստված նրա համար ոչ միայն Զորավոր, մեծ ու իմաստուն Ուժ է, այլ նաեւ՝ Արարիչ: 1902 թ. ստեղծագործական բուռն վերելքի շրջանում Թումանյանը, որ սկսել էր աշխատել «Հին կռիվը» պոեմն ակնարկելով՝ Փ. Վարդազարյանին, գրում է. «...միեւնույն ժամանակ մի մեծ ազգային պոեմա եմ ձեւում, մի բան, որ վաղուց

15 Տե՛ս «Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ», հ. 2 , էջ 24:

ներսս փոթորկում էր քառսային դրության մեջ - եւ հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ նորա- եւ անշուշտ մի օր ասելու է - եղիցի լոյս: Ահա, ինչ սքանչելի խոսք է, եղիցի լոյս... ստեղծագործության աստվածային խորհուրդը կամ ստեղծագործական հանճարի ուժը հայտնում է այս երկու խոսքով-եղիցի լոյս»[16]:

Հրանտ Թամրազյանը այսպես է մեկնաբանում Թումանյանի միտքը. «Բանաստեղծը նման է արարիչ Աստծուն, այսինքն՝ նա էլ գործ ունի քառսի հետ, նա էլ ձգտում է քառսից ստեղծել մարմին ու աշխարհ, նա էլ ուզում է լույս աշխարհ բերել իր ստեղծագործությունը: Միայն թե Աստված կարգավորում է տիեզերական քառսը, իսկ բանաստեղծը գործ ունի իր իսկ հոգու փոթորկման քառսային վիճակի հետ, որն անշուշտ ծագում է աշխարհի արձագանքներից եւ պպավորությունների բուռն լարումներից: Ամեն ինչ կախված է այն բանից, թե հեղինակը կարո՞ղ է արդյոք սանձել այդ փոթորիկը եւ լույս նետել քառսի վրա, մարմնավորել իր մտահղացումները»[17]:

Թումանյանը բոլոր դեպքերում հանճարի արարչական ուժով կարողացել է կարգավորել իր «ներսը փոթորկող» քառսը, բանաստեղծորեն մարմնավորել իր մտահղացումները՝ շարունակելով յուրօրինակ զրույցը Աստծո հետ: Ստեղծել է մարդկային հոգեաշխարհի, նրա հույսերի, հիասթափությունների, տարակույսի ու հավատի համապարփակ մի պատմություն՝ հասնելով գեղարվեստական մեծ ընդհանրացումների: Բանաստեղծ իմաստասերի քնեահույզ հայացքով դիտել ու ճանաչել է մարդուն, որ եւ՝ տառապյալ է, եւ՝ երազող, եւ՝ Աստծու պատկերն է, եւ՝ քառսի զավակը, որին անվերջ դեպի ներքեւ են ձգում նյութը, մեղքը, անասնականը, ապականվածը, իսկ հոգին մշտապես միտված է դեպի երկինք: Մարդն է, որ «իր բնությամբ սխալական է մշտապես» (Նարեկացի ՀԹ -ա), մարդն է՝ իր ողբերգությամբ՝ բարու, գեղեցիկի, կատարյալի եւ լույս-եզերքների անվերջ շարունակվող տենդագին որոնումներով:

«Կանչ»-ից երեսուն տարի անց Թումանյանը զրույց է սկսում Աստծու հետ 1921 թ. գրած մի քառյակում: Այս անգամ զրույցի նյութը մարդու հավերժական ձգտումն է՝ թափանցելու տիեզերական գաղտնիքների, կյանքի ու մահվան առեղծվածների մեջ.

Բարձր են հընոց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնագետ
Իմ խոր հոգին էն բարձունքին խոսք է բացել Նըրա հետ-
Անհայտ բանից, ըսկզբանից, երբ չըկան էլ դեռ չըկար,
Մինչ վախճանն անվախճանի քնընում է դարեդար:

Քառյակի պատկերավորման համակարգում բանաստեղծն, անշուշտ, աչքի առաջ է ունեցել անսկիզբի եւ անվախճանի ավետարանական տարբերակները. «Ես եմ Սկիզբն ու Վախճանը, ես եմ կյանքը», «Ես եմ Առաջինը եւ Վերջինը», «Այսպէս է ասում Անսկիզբը եւ Անվախճանը» (Յայտնութ. Բ 8):

Թումանյանի այս քառյակը ուշադրության արժանի է մի այլ առումով եւս: Այստեղ մարդ-Աստված հարաբերության խնդիրը, որ մշտապես հուզել է բանաստեղծին, դիտվում է մի այլ հարթության վրա: Որքան էլ մարդը աշխարհի անարդարությունների դեմ իր պայքարում զգում է Աստծու ապավինության կարիքը, այնուամենայնիվ աստվածային էության

16 **Հովհ. Թումանյան,** Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, էջ 354:
17 **Հրանտ Թամրազյան,** Հովհաննես Թումանյան Բանաստեղծը եւ մտածողը, Երեւան, 1995, էջ 250:

հեպ առնչվելիս ամենեին հայեցողական չէ, այլ ձգտում է խորամուխ լինել ու հասկանալ աշխարհի հանդեպ այդ աշխարհն արարողի վերաբերության խորհուրդը: Անճանաչելին ճանաչելու, անքննելին քննելու մարդու հավերժական ձգտումից ծագում է ժողովրդական հավատը վաղ թե ուշ Աստծու արդար դատաստանի հանդեպ: Աստվածաշնչյան այդ հավաստումը հեպաքրքիր բանաստեղծական մեկնաբանություն է ստացել «Խորհրդածություն Հայկական հարցի վրա» ոչ այնքան բանաստեղծական խորագրով ուրանավորում:

Բանաստեղծության սկզբում ուրվագծելով մայր ժողովրդի անմարդկային կացությունը՝ Թումանյանը ծանր խոսքերով ամոթանք է տալիս «մարդուն եւ ժամանակին», որ գլանում են «էս առատ-արձակ աշխարհքի միջին» հային շնորհել «իր կյանքն, իր պատիվն, իր գույքը չնչին...»: Ուրեմն ափսոս չե՞ն Աստծու ստեղծած հրաշալիքները՝ պարզ ու պայծառ արեգակը, վառվռուն ծիլն ու ծաղիկը, ասպղերը, ծովը, դաշտերն ու լեռները, եթե դրանց մեջ ծնվում են հրեշներ՝ «էսքա՛ն մարդատյաց, անխիղճ ու անսեր...»: Բայց վերջիվերջո բանաստեղծն իրեն գոտեպնդում է ժողովրդական այն անսխալ հավատով, որ Աստծու պատիժը վաղ թե ուշ կհասնի չարագործին.

Կա մեծ ու զըվարթ, իմաստուն մի ույժ
Որ Մութն աշխարհքից դանում է մարդուն11
Դեպի Լույս աշխարհք, սեր եղբայրություն...
Ամեն մի չարիք ունի իր վերջը,
Ու կա հատուցում ամեն գործի մեջ,
Կա մխիթարանք դառապող հոգուն,
Լացող աչքերին կա հանգիստ ու քուն:
Եւ դարձ կա նըրան, որ վառեց խարույկ
Խըլեց ուրիշից կյանք, պատիվ ու գույք:

Մարդը տկար ու անզոր է առանց Աստծու, առանց աստվածիմացության Նա է՝ այդ մեծ ու իմաստուն Ուժը, որ՝ «Մեծամեծ բաներ է անում, անքննելի սքանչելիքներ անթիւ» (Յոբ Թ 10), խավարից մարդուն դանում է լույս՝ սիրո ու եղբայրության աշխարհ: Կա հատուցում, մխիթարություն, անգամ դարձ նրան, ով ուրիշի կյանքն ու պատիվն է խլել. «Եւ ամեն մարդիկ կվախենան եւ Աստուծոյ գործերը կպատմեն եւ նորա արածը միտք կ՛առնեն» (Սաղմ. ԿԴ 9):